ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1951 *Общественные науки*

Ա. Մնացականյան

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ 1917—1920 ԹԹ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Ամերիկյան ժամանակակից կառավարական կլիկի հակասովետական ռեակցիոն քաղաքականությունն ունի իր պատմական անփառունակ անցյալը դեռևս սովետական իշխանության առաջին տարիներից։

Պատմության ամերիկյան կեղծարարները շատ ջանք են թափել և այժմ էլ թափում են «գունազարդելու» համաշխարհային ռեակցիայի հենարանը հանդիսացող ԱՄՆ-ի իմպերիալիստական կառավարության քաղաքականությունը, որը ռեակցիայի և ագրեսիայի քաղաքականություն է։

Շումաններն ու Ռեններները, սոցիալ-դավաճան մյուս գրչակները Ուոլ-Ստրիտի ջատագով պատմաբանների հետ գործակցած, գրել են և գրում են գրքեր. հոդվածներ, որոնց մեջ ամեն կերպ աշխատում են բոլորովին ժխտել այն իրական դերը, որ խաղացել է ԱՄՆ-ը սովետական պետության դեմ կազմակերպված ավազակային ինտերվենցիայում՝ դեռևս սովետական իշխանության գոյության առաջին տարիներին։ Այդ կաշառված գրչակներն իրենց «աշխատությունների» մեջ գունազարդում են ամերիկյան իմպերիալիզմի քաղաքականությունը, գովերգում այն։

Դժբախտաբար մեր սովետական պատմաբաններից ոմանք նույնպես ռազմական ինտերվենցիայի պատմությունը քննարկելիս չեն բացահայտել և մերկացրել ամերիկյան իմպերիալիզմի դերը սովետական իշխանության դեմ կազմակերպված ինտերվենցիայում։ Օրինակ՝ ամենամասսայական մի գրքում, միջնակարգ դպրոցների 10-րդ դասարանի համար հրատարակված ՍՍՌՄ-ի պատմության դասագրքի 3-րդ հատորում չի բացահայտվում ամերիկյան իմպերիալիզմի թշնամական դիրքը և փաստական նյութով ցույց չի տրվում, որ ԱՄՆ-ը մասնակցել է Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված ինտերվենցիային։[1]

Պրոֆ. Լ. Ի. Զուբոկը իր «Նորագույն պատմություն» գրքում պնդում է, որ կբր թե «Վիլսոնը դեմ էր բացահայտ ինտերվենցիային»,[2] *որ ի տարբերություն մյուս իմպերիալիստական պետությունների «ԱՄՆ-ը մինչև 1918 թ. կեսերը չէր միացել ինտերվենտներին»։*[3]

Մի ուրիշ «պատմաբան» Վ. Լանը իր «ԱՄՆ-ը առաջին համաշխարհային պատերազմից մինչև 2-րդը» գրքում[4] *աղավաղելով պատմական փաստերը,*

---

[1] *ՍՍՌՄ պատմություն, 3-րդ մաս, 2-րդ հրատ., Հայպետհրատ, Երևան, 1950 թ.։*

[2] Л. И. Зубок, США, в 1918—1923 годах. Новейшая история 1918—1923 гг. 1948 г. стр. 156.

[3] *Նույն տեղում։*

[4] В. Лан, США от первой до второй мировой войны, Гослитиздат, 1947, см. стр. 61, 68 и др.

հանդես է դալիս ամերիկյան իմպերիալիզմին և նրա պարագլուխ Վիլսոնին դովերգոլի դերում, բացառելով նրա ակտիվ մասնակցությունը Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական ինտերվենցիա կազմակերպելու գործում։

Այդ և ուրիշ աշխատությունների մեջ Ռուսաստանի սովետական իշխանության դեմ 1918—1920 թթ. կազմակերպված ինտերվենցիային ԱՄՆ-ի մասնակցության անտեսումը աղավաղում է պատմական ճշմարտությունը։

Ամեն տեսակ խրախուսանքի արժանի են և մեծ հետաքրքրություն ու արժեք ունեն Ա. Բերյոզկինի „США — активный организатор и участник военной интервенции против Советской России"[1] գիրքը, Ա. Լեոնտևի „Империализм доллара в Западной Европе"[2] գիրքը, Բ. Շտեյնի „Русский вопрос на парижской мирной конференции"[3] գիրքը և Ա. Ե. Կունինայի „Провал американских планов завоевания мирового господства в 1917—1920 гг."[4] աշխատությունը։

Այդ աշխատությունների հեղինակները բարեխղճորեն ուսումնասիրել են Լենինի և Ստալինի ասույթները ԱՄՆ-ի իմպերիալիզմի գիշատիչ բնույթի մասին, ելնելով լենինյան-ստալինյան դրույթներից, պատմական հարուստ փաստացի նյութերի անալիզի հիման վրա նրանք մերկացնում և ցույց են տալիս ամերիկյան իմպերիալիզմի ակտիվ դերը որպես Սովետական Ռուսաստանի դեմ ավազակային արշավանքի կազմակերպիչներից ու ոգեշնչողներից մեկի, որն անգլիական, ֆրանսիական և ճապոնական գավթիչների հետ միասին ձգտում էր սովետական իշխանությունը տապալել դեռևս 1917—1920 թթ.։ Նրանք միաժամանակ ցույց են տալիս ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիայի խայտառակ ձախողումը։

Ամերիկյան իմպերիալիստները Ռուսաստանի հարստություններով վաղուց էին հափշտակվում։ Դեռևս 19-րդ դարում (1867 թ.) ԱՄՆ-ը ռուսական ապիկար թագավորին խաբելով, չնչին արժեքով՝ 14.320.000 ռուբլով (7,2 միլիոն դոլարով) «գնեց» Ռուսաստանին պատկանող Ալյասկա թերակղզին։ Այդ գործարքի նպատակն էր ոչ միայն տիրել և յուրացնել Ալյասկայի ընդերքի հարստությունները, այլև Ալյասկան օգտագործել որպես ստրատեգիական պլացդարմ, ուղի հարթել դեպի Ռուսաստան հետագա ագրեսիայի համար։

Մարքսը մատնանշում էր, որ նոր տերիտորիաների գավթումը, նոր ժողովուրդների վերածումն ստրուկների, կապվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների ստրկատերերի կյանքի օրենքը։[5] Ուրիշների տերիտորիաները բռնությամբ գավթելու մասին գրել են հենց իրենք, ամերիկյան պատմագիրները։ 1903 թ. ԱՄՆ-ում հրապարակվել է «Ամերիկյան բանակի պատմությունը» վերնագրով մի գիրք, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ամերիկայի իմպերիալիզմի կողմից ուրիշ երկրների գավթման և ուրիշ ժողովուրդների ստրկացման պատմությունը։ Այդ գրքի մեջ նշված է, որ ԱՄՆ-ի անկախության հռչակումից սկսած մինչև 1903 թիվը ԱՄՆ-ը մղել է 114 պատերազմ, նրա բանակը տվել է 8600

---

[1] Гослитиздат, Москва, 1949, стр. 132. Գիրքը 1951 թ. արժանացել է Ստալինյան մրցանակի։

[2] Гослитиздат, 1949, стр. 419.

[3] Гослитиздат, 1949, стр. 463.

[4] Госполитиздат, 1951, стр. 236.

[5] К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 12, ч. 2, стр. 240.

մեծ և փոքր ճակատամարտ և ընդհարումներ։ Այդ ժամանակամիջոցում ԱՄՆ-ի տերիտորիան 386.000 քառ. միլ տարածությունից՝ զավթումների միջոցով ավելացել էր 10 անգամ, կամ ուրիշ ժողովուրդներից գրավվել և ԱՄՆ-ին էր միացվել ավելի քան 3.000.000 քառ. միլ։[1]

Այդ տարածությունների վրա ապրող տասնյակ միլիոնավոր նեգրեր, հընդիկներ և այլն դարձան ԱՄՆ-ի իմպերիալիստների ագրեսիայի զոհերը, զրկվեցին ազատությունից և ընկան «քաղաքակիրթ» միլիարդատերերի ստրկական լծի տակ։ ԱՄՆ-ի ստրկատերերը, իրենց տիրապետությունը տարածելով դեպի Հարավային Ամերիկա, Աֆրիկա, Չինաստան և Մայր ցամաքների ու ծովերի այլ կողմերը, երբեք իրենց ուշադրությունից չէին հեռացնում անծայրածիր Ռուսաստանն իր հարստություններով։

Ամերիկյան խոշոր կապիտալիստներից մեկը՝ Հերբերտ Հուվերը (հետագայում ԱՄՆ-ի պրեզիդենտ) դեռևս 1909 թ. թափանցելով Ռուսաստան, սկսեց շահագործել Մայկոպի նավթահանքերը։ Նա մեկ տարվա ընթացքում կազմակերպել էր 11 նավթային «ակցիոներական ընկերություն» և իր ձեռքը կենտրոնացրել նրանց ակցիաները։ Այնուհետև Հուվերը անգլիական միլիոնատեր Լեսլի Ուրկվարտի հետ միասին նույնպիսի «ընկերություններ» ստեղծեց նաև Ուրալում և Սիբիրում և սկսեց շահագործել այդ ռայոնների հանքային հարստությունները։ Հուվերի մոնոպոլիաները Ռուսաստանում 1912 թ. արդեն ունեին մեկ միլիարդ դոլարի հասնող հարստություն։[2]

Հուվերը միակ արդյունաբերողը չէր, որ ցարիզմի ժամանակ ձգտում էր արմատներ գցել Ռուսաստանում։ Մասնավորապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին հսկայական չափերով ավելացավ ԱՄՆ-ի ապրանքների ներմուծումը Ռուսաստան։ Ռուսական շուկան հետզհետե դառնում էր ԱՄՆ-ի մոնոպոլիստների ապրանքների սպառողը։ Այսպես, ԱՄՆ-ից Ռուսաստան ներմուծումը և Ռուսաստանից ԱՄՆ արտահանումը 1913—1916 թթ. հետևյալ պատկերն է ներկայացնում ապրանքի արժեքը նշված միլիոն դոլարներով.[3]

Տարիներ	Ռուսաստանից ԱՄՆ արտահանում	ԱՄՆ-ից Ռուսաստան ներմուծում
1913 թ.	24.377.070	26.909.707
1914 թ.	14.569.397	27.955.337
1915 թ.	3.086.595	169.933.904
1916 թ.	8.618.695	470.508.254

Այս թվերը ցույց են տալիս, որ տարեց տարի ցարական Ռուսաստանն ավելի ու ավելի էր կախման մեջ ընկնում ԱՄՆ-ից։ Համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանը հեղեղված էր ամերիկյան զանազան միսիա-

---

[1] А. Леонтьев, Империализм доллара в Западной Европе, Госполитиздат, 1949, стр. 6—7.

[2] М. Сейерс и А. Кан, Тайная война против Советской России, стр. 117—118.

[3] *Աղյուսակը բերվում է ըստ.* Бьерзгкйнь США—активный организатор и участник военной интервенции против Советской России в 1918—1920 гг. *գրքից*, М. 1949, стр. 10.

ներով, կոնսուլություններով, ռազմա-քաղաքական խորհրդականներով և այլ ներկայացուցչություններով, որոնք բոլորն էլ հետապնդում էին նույն նպատակը՝ Ռուսաստանում ամերիկյան իմպերիալիզմի դիրքերի ամրապնդումը և ամերիկյան մոնոպոլիաների շահերի ապահովումը։

Նշենք դրանցից ամենահայտնիներին։

Խոշոր բանկիր և հացի մոնոպոլիստ Ֆրենսիսը 1916 թ. նշանակվել էր Պետրոգրադում ԱՄՆ-ի գլխավոր դեսպան։ Նա մի քանի տասնյակ ամերիկացիների հետ կազմակերպում ու գլխավորում էր ԱՄՆ-ի լրտեսական-դիվերսիոն կազմակերպությունների գործը։ Նույն առաջադրանքներով էին աշխատում ԱՄՆ-ի Մոսկվայի հյուպատոս Սամմերսը, Վլադիվոստոկի, Տոմսկի, Թբիլիսիի, Բաթումիի, Արխանգելսկի, Չիտայի, Սամարայի և մյուս կարևոր ստրատեգիկան կետերի հյուպատոսները։

Պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի ռազմական կցորդ Կերտը, Վիլյամ Ջադսոնը և ուրիշներ վխտում էին ռուսական բանակի շտաբներում և արսենալներում։ Ամերիկյան կարմիր խաչի ռուսական կազմակերպությունը մի ընդարձակ ցանց էր ստեղծել ամբողջ երկրում և «սանիտարական-բարեգործական» նպատակների քողի տակ կատարում էր լրտեսական-դիվերսիոն աշխատանք։ Այդ կազմակերպության ղեկավարներ գնդապետ Տոմսոնը և նրա տեղակալ Ռոբինսը ԱՄՆ-ի ամենափորձված հետախույզներից էին։

Փետրվարյան ռևոլուցիայից հետո ԱՄՆ-ի կառավարությունը առաջինն էր բոլոր պետությունների մեջ, որ ողջունեց իշխան Լվովին և ճանաչեց ժամանակավոր կառավարությունը, պատրաստակամություն հայտնեց «ամեն բանով օգնել» ռուսական «դեմոկրատիային» պատերազմը շարունակելու մինչև «հաղթական վախճանը»։ Որպես դրա «ապացույց» պրեզիդենտ Վիլսոնն ավելացրեց Ռուսաստանում գործող միսիաների և ներկայացուցչությունների քանակը։ Իսկույն Պետրոգրադ ուղարկվեց մի «տեխնիկական միսիա»՝ Պանամայի ջրանցքը կառուցող մոնոպոլիստ Ստիվինսոնի գլխավորությամբ։ Ստիվինսոնը նշանակվեց ժամանակավոր կառավարության Տրանսպորտի մինիստրի խորհրդական, իսկ 12 ջոկատներից բաղկացած ինժեներները կազմեցին «Ամերիկյան երկաթուղային կորպուս», որը վերահսկողություն սահմանեց Պետրոգրադ—Մոսկվա և Սիբիր—Հեռավոր Արևելք երկաթուղիների վրա։ ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Ռուտն անձամբ անցավ Ռուսաստան ուղարկվող «Արտակարգ դիպլոմատիկական միսիայի» գլուխը։ Հետաքրքրական է միսիայի կազմը. այդ միսիայի մեջ մտնում էին նաև գեներալ Հյու Սկոտը, փոխադմիրալ Ջեմս-Գլինոնը և հարյուրավոր այլ սպաներ ու հետախույզներ։ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը Ռուտին խոստացել էր տրամադրել 100 միլիոն դոլար ժամանակավոր կառավարությանը վարկ տալու համար։

«Արտակարգ դիպլոմատիկական միսիայի» առաջ խնդիր էր դրված՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել՝ ցրելու սովետները, ոչնչացնելու բոլշևիզմը, Ռուսաստանում ամրապնդելու ԱՄՆ-ի դիրքերը։ ԱՄՆ-ի դեսպան Ֆրենսիսը հուլիսյան դեպքերի ժամանակ պահանջում էր Կերենսկուց ցրել բոլշևիկյան կազմակերպությունները, ձերբակալել և սպանել Լենինին։ ԱՄՆ-ի գործիչները գտնում էին, որ այդ խնդիրներն ընդունակ են կատարելու միայն Կոռնիլովը, Ալեքսեևը և Կերենսկին, ուստի նրանց էլ ցույց էր տրվում օգնություն։ Ընկեր Ստալինը 1917 թ. օգոստոսին իր «Ամերիկյան միլիարդները» վերնագրով հոդվածում բացահայտում է այն փաստը, թե ինչպես ամերիկյան

իմպերիալիստական բուրժուազիան ֆինանսավորում էր ռուսական իմպերիալիստական բուրժուազիային (Միլյուկով), զինվորականությանը (Կերենսկի) և նրանց լաքեյաբար ծառայող մանր բուրժուական վերնախավերին (Ծերեթելի)։

Ընկեր Ստալինը գրել է.

«Այն պահին, երբ ռուսական ռևոլուցիան ուժերը լարում է իր նվաճումները պաշտպանելու համար, իսկ իմպերիալիզմն աշխատում է ոչնչացնել այն,— ամերիկյան կապիտալը միլիարդներ է մատակարարում Կերենսկու-Միլյուկովի-Ծերեթելու կոալիցիային, որպեսզի, վերջնականապես սանձահարելով ռուսական ռևոլուցիան, ջլատի Արևմուտքում աճող ռևոլուցիոն շարժումը»։[1]

Պարտիայի 6-րդ համագումարը 1917 թ. օգոստոսի 7-ին իր մի բանաձևում նշեց, որ «հրապարակի վրա հանդես է եկել իմպերիալիզմի մի նոր գիշատիչ և հավակնություն ունի համաշխարհային տիրապետության՝ Ամերիկան»։[2] Այսպես, ուրեմն, ԱՄՆ-ը դարձել էր Եվրոպայի և Ասիայի ժանդարմը։

Հոկտեմբերյան հեղաշրջման նախօրյակին ԱՄՆ-ի գեներալները Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս երկրների իրենց կոլեգաների հետ միասին գիշեր ու ցերեկ, գաղտնի և բացահայտ, ժամանակավոր կառավարության հետ քննարկում էին ռևոլուցիան ճնշելու հարցերը, սակայն նրանց ջանքերը զուր էին անցնում։ Ռևոլուցիան ծավալվում էր։ Ռևոլուցիայի ծավալման այդ օրերին ամերիկյան գործակալներն ավելի ակտիվորեն էին գործում, հանդես բերելով ամերիկյան իմպերիալիստների բացահայտ թշնամությունը դեպի Ռուսաստանի ժողովուրդները։ Ավելի որոշակի երևում էին ԱՄՆ-ի ղավթողական նպատակները։

Այդ են վկայում պատմական փաստերը, այդ մասին գրել են ԱՄՆ-ի դիվանագետներն ու հետախույզներն իրենց հուշերում, զեկուցագրերի մեջ։ Այդ ղավթողական նպատակները դրսևորվել են ամերիկյան կառավարության քաղաքականության մեջ՝ դեպի Ռուսաստանը, դեպի ՍՍՌՄ-ի ժողովուրդները։

* * *

1917 թ. նոյեմբերի 3-ին, հոկտեմբերյան հեղաշրջումից ընդամենը 4 օր առաջ, Պետրոգրադում, ամերիկյան գնդապետ Տոմսոնի կաբինետում հրավիրվում է ամերիկյան ռազմական ու այլ ներկայացուցիչների և դաշնակիցների՝ անգլիական, ֆրանսիական, ճապոնական, իտալական ռազմական ներկայացուցիչների գաղտնի խորհրդակցություն։ Խորհրդակցությունը ղեկավարում է նրա նախաձեռնողը՝ գնդապետ Տոմսոնը։

Օրակարգում դրված էր մեկ հարց.

«Ինչպես ջախջախել բոլշևիկներին»։[3]

Գնդապետ Տոմսոնը հայտնում է իր դժգոհությունը ռուս դաշնակիցներից և իր անգլո-ֆրանսիական կոլեգաներից, նա հանդիմանում է թե՛ մեկին և թե՛ մյուսներին այն բանի համար, որ նրանք անբավարար են օգնել Կոռնիլովին և չեն ապահովել Կոռնիլովշչինայի հաղթանակը, ռազմական դիկտատուրայի ստեղծումը, չեն լիկվիդացրել Պետրոգրադում աճող ռևոլուցիոն շարժումները։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 3, էջ 270, Հայպետհրատ, 1948։

[2] Протоколы VI съезда РСДРП (б).

[3] М. Сейерс и А. Кан, Тайная война против Советской России. М., 1947, стр. 12.

Տոմսոնը հիմք ուներ անհանգստանալու։ Նա իր գործակիցների հետ միասին չէր կարողանում կատարել պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի տված առաջադրանքը, չէր կարողանում ապահովել ԱՄՆ-ի ծրագրերի իրագործումը, մոնոպոլիստների շահերի պահպանումն ու ընդլայնումը։ Տոմսոնը տեսնում էր, որ Ամերիկայի համար «Ռուսաստանը ձեռքից գնում է»։ Իսկ Ռուսաստանի հետ մեծ երազանքներ էին կապված։ ԱՄՆ-ի կառավարությունը, ամերիկյան խոշոր բանկիրները, մոնոպոլիստները ցանկանում էին Ռուսաստանը տեսնել իրենց արտահանման շուկաների և հումքի աղբյուրների շարքում, մինչդեռ Ռուսաստանում սկսված սոցիալիստական ռևոլուցիան հիմքից խորտակում էր ամերիկյան իմպերիալիստների բոլոր ծրագրերը։

* * *

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Պետրոգրադում հաղթանակով պսակվեց Հոկտեմբերյան զինված ապստամբությունը, որը կազմակերպել և ղեկավարում էին ռևոլուցիայի մեծ առաջնորդներ Լենինն ու Ստալինը։

Նույն օրը, ցերեկը, Կերենսկին փախչում է ռևոլուցիոն Պետրոգրադից։ Սակայն, քաղաքից հեռանալուց առաջ, նա ավտոմեքենայով շտապ այցելում է ԱՄՆ-ի դեսպանությունը՝ Ֆրենսիսին «մնաս բարով» ասելու։ Կերենսկին խոստանում է շուտով ֆրոնտից վերադառնալ զորքով և «հինգ օրում ամեն բան կարգի բերել»։[1]

Նույն օրը երեկոյան ժամը 6-ին Ֆրենսիսը հեռագիր է ուղարկում Վաշինգտոն։ Հեռագրում ասված է. «Ըստ երևույթին բոլշևիկներն այստեղ բոլորը գրավել են։ Չեմ կարողանում գտնել ոչ մի մինիստր»։[2]

Երեկոյան բացվում է Սովետների 2-րդ համագումարը։ Ստեղծվում է Սովետական կառավարություն։ Հռչակվում են Սովետական կառավարության լենինյան առաջին դեկրետները հողի և խաղաղության մասին։

Այդ օրվանից բացվեց նոր դարագլուխ մարդկության պատմության մեջ։ Սովետական կառավարությունը կոչերով և նոտայով դիմեց բոլոր պատերազմող պետություններին ու ժողովուրդներին՝ առաջարկելով սկսել հաշտության բանակցությունները և դադարեցնել պատերազմական գործողությունները։ Ամբողջ աշխարհը տեսավ, որ Լենինի գլխավորած Սովնարկոմը բոլորովին նոր տիպի կառավարություն է, բանվորների և գյուղացիների կառավարություն, պրոլետարիատի սոցիալիստական պետության, իշխանության օրգանը, նոր տիպի կառավարություն՝ իր նոր քաղաքականությամբ, կապիտալիզմը խորտակելու և սոցիալիզմ կառուցելու իր նոր ծրագրերով, ժողովուրդների միջև խաղաղություն և համագործակցություն հաստատելու իր հաստատուն քաղաքականությամբ։

ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության և Ռուսաստանի գաղութացման ծրագրերը տապալվում էին. ԱՄՆ-ի իմպերիալիստները հենց այդ օրերից էլ դասակարգային ատելությամբ և ոխերիմ թշնամությամբ լցվեցին դեպի նոր ծնված սովետական իշխանությունը, դեպի սովետական կարգը։

---

[1] Тайная война против Советской России, стр. 14.

[2] Նույն տեղում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից անմիջապես հետո ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը հրապարակեց հայտարարություն, թե նա չի ճանաչում սովետական իշխանությունը, որը, ըստ այդ հայտարարության, կխորտակվի մոտիկ օրերում։ Այնուհետև պաշտոնապես տեղեկացվեց ժամանակավոր կառավարության Վաշինգտոնի դեսպան Բախմետևին, որ ԱՄՆ-ի կառավարությունը որպես Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչ ճանաչում է միայն «օրինական դեսպան Բախմետևին»։ (Այս փաստը շատ նման է ներկայումս Միացյալ ազգերի կազմակերպության մեջ և ԱՄՆ-ում՝ չինական գոմինդանական ռեակցիոն բանդայի ներկայացուցիչներին ճանաչելու, տեղ տալու և նրանց հետ բանակցելու փաստին)։

ԱՄՆ-ի դեսպան Ֆրենսիսը ռևոլուցիայից անմիջապես հետո ԱՄՆ-ի պետական քարտուղար Լանսինգին ուղարկած հեռագրում պնդում է, թե «եկել է ժամանակը, որպեսզի դաշնակիցները գործի անցնեն»։[1] Շուտով Ռուսաստանից Ամերիկա կանչվեցին ռազմական կցորդ գեներալ Վիլյամ Ջեքսոնը և Ամերիկյան կարմիր խաչի նախագահ դոկտոր Տոմսոնը՝ նոր դիրեկտիվներ և առաջադրանքներ ստանալու համար։[2]

1917 թ. նոյեմբերի 28-ին Փարիզում բացվեց Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Անտանտի մյուս դաշնակից պետությունների բարձրագույն խորհրդի կոնֆերանս, որը քննարկեց և ընդունեց միջոցառումներ՝ Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական ինտերվենցիա կազմակերպելու մասին։ Կոնֆերանսի աշխատանքներին վերաբերող կոմյունիկեում ասված էր.

«Դաշնակիցները միջոցառումներ կձեռնարկեն, որպեսզի սահմանեն... իսկական վերահսկողություն ռուսական արտաքին քաղաքականության վրա։ Այդ վերահսկողությունն իրականացնելու գործում գլխավոր դերը պետք է խաղան Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ճապոնիան»։[3] (Ընդգծումները մերն են— Ար. Մն.)։

Իմպերիալիստների միջազգային ավազակության «բարձրագույն» կազմակերպիչների ընդունած այդ որոշումը ինքն է խոսում իր մասին և ոչ մի կոմենտարի կարիք չի զգում։

Ամերիկյան դեսպանները, միսիաները, գործակալները, լրտեսները անմիջապես ակտիվ գործունեություն ծավալեցին իրենց տրված առաջադրանքները կատարելու համար։ Ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ճապոնական և մյուս երկրների դեսպանները, զինվորական ներկայացուցիչները լայն կապեր են պահպանում Ռուսաստանի տարբեր մասերում գտնվող հակասովետական դիվերսիոն-լրտեսական կազմակերպությունների հետ, դրանք աստիճանաբար վեր են ածում սովետական իշխանության դեմ տեռոր և ինտերվենցիա կազմակերպող հենակետերի, նպատակ ունենալով նրանց օգնությամբ տապալել սովետական իշխանությունը։

Ամենից առաջ՝ ԱՄՆ-ի կառավարությունը մյուս դաշնակիցների հետ որոշել էր վիժեցնել Սովետական կառավարության քաղաքականությունը հաշտության հարցում։ ԱՄՆ-ի ռազմական կցորդ Կերտը 1917 թ. նոյեմբերի 27-ին

---

[1] Բերվում է ըստ Բերյոզկինի նշված գրքի, էջ 19։

[2] Тайная война против Советской России, стр. 17, 19.

[3] Քաղվածքը բերվում է Շտեյնի Русский вопрос на парижской мирной конференции գրքից, էջ 27։

գաղտնի բանակցություններ է վարում գլխավոր հրամանատար Ռուզսկինի հետ, նրան առաջադրանք տալով Ռուսաստանի հետ հաշտություն կնքելու վերաբերյալ որոշումը և շարունակել պատերազմը Գերմանիայի դեմ։ Այդ ԱՄՆ-ին հարկավոր էր մի կողմից այն նպատակով, որ Գերմանիան շարունակի պատերազմել երկու ճակատով, ուժերի մի մասը պահի Ռուսաստանի դեմ, մյուս կողմից հենց գերմանական գիշատիչների բանակի օգտագործմամբ ճզմի երիտասարդ սովետական ռեսպուբլիկան։ Իմանալով ԱՄՆ-ի այդ նենգավոր նպատակները, Սովետական կառավարությունը վճռականապես բողոքեց օտարերկրյա դիպլոմատների կողմից Ռուսաստանի ներքին գործերին միջամտելու դեմ և կտրականապես պահանջեց թույլ չտալ ոչ մի միջամտություն սովետական երկրի ներքին գործերին։[2]

Բրեստի հաշտության դեմ մղվող պայքարի գլխավոր կազմակերպիչները Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի կառավարություններն էին, իսկ Տրոցկին և նրա գործակիցները իրենց ամեն մի քայլը կատարում էին այդ իմպերիալիստական կառավարությունների հետախուզության առաջադրանքներով, հենց այդ ժամանակից հանդիսանալով նրանց լրտեսները։

ԱՄՆ-ի իմպերիալիստները սովետական իշխանության դեմ մղվող պայքարը կազմակերպում էին գաղտնի կերպով։

Պրեզիդենտ Վիլսոնը հրապարակայնորեն հանդես էր գալիս «ուրիշ երկրների գործերին չմիջամտելու» դեկլարացիաներով։ ԱՄՆ-ի կառավարությունը և դաշնակիցները սովետական իշխանության տապալման իրենց ծրագիրը 1917 թ. վերջերին ուզում էին իրագործել առանց իրենց զինված ուժերը Ռուսաստան մտցնելու, ուզում էին իրագործել դիվանագիտական խարդախությունների, պատերազմի պրովակացիաներ սարքելու, տեռորի և դավադրությունների միջոցով։ Թերևս այդ է շփոթեցրել որոշ պատմաբանների, որոնք գտնում են, թե «ԱՄՆ-ը առաջին շրջանում չէր մասնակցում ինտերվենցիային»։ Ընկեր Ստալինը մերկացրել է իմպերիալիզմի քողարկված ինտերվենցիայի աստառը, ցույց է տվել նրա էությունը։

Ընկեր Ստալինը մատնանշում է.

«... զորքեր մտցնելը ամենևին էլ չի կազմում ինտերվենցիայի հիմնական առանձնահատկությունը։ Կապիտալիստական երկրներում ռևոլյուցիոն շարժման արդի պայմաններում, երբ օտարերկրյա զորքերի ուղղակի մուտքը կարող է մի շարք բողոքներ ու կոնֆլիկտներ առաջ բերել, ինտերվենցիան ավելի ճկուն բնույթ և ավելի քողարկված ձև ունի։ Արդի պայմաններում իմպերիալիզմը գերադասում է ինտերվենցիան կատարել կախյալ երկրի ներսում քաղաքացիական պատերազմ կազմակերպելու միջոցով, կոնտրռևոլյուցիոն ուժերին ռևոլյուցիայի դեմ ֆինանսավորելու միջոցով...»։[3] Հենց այդպիսի ինտերվենցիա սկսեց ԱՄՆ-ը սկզբում, սակայն հետո անցավ նաև բացահայտ զինված միջամտության։

Լանսինգը 1917 թ. դեկտ. 10-ին Վուդրո Վիլսոնին գրում է. «Եթե բոլշևիկները մնան իշխանության գլուխ, մենք այլևս բացարձակապես ոչ մի բանի վրա չենք կարող հույս դնել»։[4]

---

1 Տես Բերյոզկինի նշված գիրքը, էջ 20։
2 Տես «Իզվեստիա» թերթը, 18 նոյեմբերի 1918 թ.։
3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 8, էջ 402, Հայպետհրատ, 1949 թ.։
4 А. Е. Кунина, Провал американских планов завоевания мирового господства в 1917—1920 гг., стр. 31, М., 1951.

Վիլսոնի հանձնարարությամբ պետական քարտուղար Լանսինգը 1917 թ. վերջերին մշակեց ծրագիր՝ Ռուսաստանում սպիտակգվարդիական բանակներ ստեղծելու, նրանց զինելու, մատակարարելու, սովետական երկրում քաղաքացիական պատերազմ և ինտերվենցիա կազմակերպելու մասին։

1917 թ. դեկտեմբերի 12-ին Վիլսոնի առաջադրանքով Լանսինգը հեռագիր ուղարկեց Լոնդոն՝ ԱՄՆ-ի դեսպանության, հանձնարարելով ձեռնարկել ամեն տեսակի օգնություն Ռուսաստանում ձևավորվող սպիտակգվարդիական բանակներին։ Հեռագրում ասված էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը «համակրում է Կալեդինին և նրան ցույց կտա ամեն տեսակ օգնություն»։[1]

Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպան Սամմերսը հանդիպումներ էր ունենում ցարական բանակի նախկին գլխավոր շտաբի պետ գեներալ Ալեքսեևի հետ։ Ֆրենսիսը կապված էր Կալեդինի և Կոռնիլովի հետ։ Վաշինգտոն ուղարկած մի հեռագրում Ֆրենսիսը դեկտեմբերի սկզբներին հաղորդել է, թե ինչպես Կալեդինը 200 հազար կազակներից բանակ է կազմակերպում և օրերս շարժվելու է դեպի Մոսկվա—Պետերբուրգ։[2] Կալեդինի լրտեսները Պետերբուրգում Ֆրենսիսից ցուցումներ էին ստանում և գործում ընդդեմ սովետների, հօգուտ Կալեդինի։

Այսպիսով, 1917 թ. սովետական իշխանության գոյության առաջին օրերում և շաբաթներում ԱՄՆ-ի իմպերիալիստների կառավարությունը գործի էր դրել իր և դաշնակիցների բոլոր միսիաներին, դոլարի դիպլոմատներին ու գործակալներին և աշխատում էր նրանց միջոցով կազմակերպել դավադրություններ, սովետական իշխանությանը թույլ չտալ հաստատվելու, սմրապընդվելու. ձգտում էր հասնել նրա շուտափույթ տապալմանը։

Ընկեր Ստալինը ամերիկյան, անգլիական և Անտանտի մյուս պետությունների միսիաների դավադիր գործողությունները բացահայտելով, 1917 թ. դեկտեմբերի 15-ին գրում էր. «Միսիաների դերը բավականաչափ պարզված է. օդոստոսին նրանք օգնում էին Կոռնիլովին, նոյեմբերին՝ Ռաձային ու Կալեդինին, դեկտեմբերին գրահապատ մեքենաներ են մատակարարում խռովարարներին»։[3]

1918 թ. հունվարին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը հրապարակ բերեց իր այսպես կոչված «14 կետերը»։ Ամերիկյան միլիարդատերերի պարագլուխն իր «14 կետերը» հայտարարեց որպես «խաղաղության ծրագիր»։ Դա Վիլսոնի կողմից կեղծավորության, փարիսեցիության, ուխտադրժության և խաբեբայության մի նոր, համաշխարհային ռեկորդ էր։ Վիլսոնի «14 կետերի» մեջ 6-րդ կետը ամբողջովին վերաբերում էր «ռուսական հարցին»։ Այդ կետի մեջ ավելի քան դրսևորվեց Վիլսոնի կեղծիքը, խարդախությունը և Ռուսաստանն անդամահատելու, ջլատելու ամերիկյան ավազակային ծրագրերի խորամանկ դիմակավորումը։

Քանի որ «14 կետերի» մեջ հարցերը շատ մշուշապատ էին, ուստի հստակորեն ԱՄՆ-ի ծրագրերը դրսևորելու համար հարկավոր էին «կոմենտարիաներ»։

Վիլսոնի օգնական դնդապետ Հաուզը մշակեց «14 կետերի» կոմենտարիաներ, որ հաստատվեց պրեզիդենտի կողմից։ «Կոմենտարիաները» հանդիսա-

---

1 М. Сейерс и А. Кан. Тайная война против Советской России. стр. 20—21.

2 Նույն տեղում։

3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 24, Երևան, Պետհրատ, 1948։

ցան ԱՄՆ-ի իմպերիալիզմի ծրագրերի ու համաշխարհային տիրապետության ձգտումների ավելի պարզ շարադրանքը։[1]

Այդ սև փաստաթղթում կետ առ կետ նախատեսված էր Ռուսաստանի մասնատումը, նրա մարզերի ջլատումը և հանձնումն իմպերիալիստական պաղեստիներին։ Դա ամերիկյան իմպերիալիստների լկտի մի ծրագիր էր։

Առաջին հարցը, որ ընդգծված էր «կոմենտարիաների» մեջ, այն էր, թե «Ռուսաստանի տերիտորիա» հասկացողությունը իհարկե այն տերիտորիաները չեն, որ առաջ մտնում էին ռուսական կայսրության մեջ»։[2] Այդ հարցը «մեկնաբանվում է» այսպես, որ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, նաև Ուկրաինայի համար «ճիշտ պետք է համարել անջատումը Ռուսաստանից» և առհասարակ պետք է դիտել որպես «Ռուսական հարցի հետ կապ չունեցող հարց»։

Այսպիսով ԱՄՆ-ի կառավարությունը որոշել էր Մերձբալթիկան և Ուկրաինան անջատել Ռուսաստանից։ Այս փաստերից ստացվում է, որ գերմանական ֆաշիզմի պարագլուխ Ադոլֆ Հիտլերը Ուկրաինայի և Մերձբալթիկայի Ռուսաստանից անջատման ծրագիրը ոչ թե առաջին անգամ ինքն էր հնարել, այլ փոխ էր վերցրել ամերիկյան պրեզիդենտ Վուդրո Վիլսոնից։

Ոչ պակաս լկտի էր Վիլսոնի ծրագիրը Կովկասի և Հայաստանի մասին։ «Կոմենտարիաներում» ուղղակի ասված է. «Կովկասն, ըստ երևույթին, պետք է դիտել որպես թյուրքական իմպերիայի պրոբլեմի մի մասը»։[3] Այսպես, ուրեմն, ամերիկյան իմպերիալիստական կառավարությունն առաջարկում էր Կովկասի ժողովուրդների բախտը թողնել թյուրքական դահիճների քմահաճույքին։

Ինչ վերաբերում է Միջին Ասիայի ժողովուրդներին, այդ մասին «կոմենտարիաները» նախատեսնում էին. «Որևէ պետության տրամադրել սահմանափակ մանդատ, պրոտեկտորատի հիման վրա կառավարելու»։[4] Վիլսոնը չէր մոռացել հատուկ տեղ հատկացնել Սիբիրին և Հեռավոր Արևելյան մարզերին։ Այդ մասին «կոմենտարիան» սահմանում է. «Ուղերձով դիմել խաղաղության կոնֆերանսին, առաջարկել ստեղծել մի այնպիսի կառավարություն, որը բավականաչափ ներկայացուցչական լինի և հանդես գա այդ տերիտորիաների անունից»։[5]

Այդ «որևէ պետությունն» իհարկե հանդիսանում էր ԱՄՆ-ը, բանի որ, ինչպես նշվեց վերևում, դեռևս 1917 թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ դաշնակիցների բարձրագույն խորհուրդը Սիբիրի և Հեռավոր Արևելքի օկուպացման գործում «գլխավոր դերը» վերապահել էր ԱՄՆ-ին և Ճապոնիային։

Եվ վերջապես «կոմենտարիաների» մեջ կար նաև մի բացահայտ լկտի կետ, որտեղ ասված էր. «... խաղաղության կոնֆերանսի առջև դրված կլինի մի մարդու (չդրված) թերթ թուղթ, որի վրա կարելի կլինի «բաղադրականություն գծել» նախկին ռուսական միապետության բոլոր ժողովուրդների համար»։[6]

Այսպիսով, չնայած այն բանին, որ Վիլսոնը հրապարակայնորեն հանդես էր գալիս Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ «բարի ցանկություններ-

---

1 Տես Архив полковника Хауза, Гослитиздат, 1944, 4-ый том.
2 Նույն տեղում, հատոր 4, էջ 151։
3 Նույն տեղում, էջ 152։
4 Նույն տեղում, էջ 153։
5 Նույն տեղում, էջ 152։
6 Նույն տեղում, էջ 153։

ռով» և «խաղաղասիրական» հայտարարություններով, նրա ներքին գործերին «չմիջամտելու» կոչերով և այլն, իրականում նա հանդիսանում էր Ռուսաստանը մաս-մաս անելու, նախկին ցարական Ռուսաստանի տիրապետության մեջ մտնող տարբեր ժողովուրդներին Սովետական Ռուսաստանից անջատելու, նրանց ամերիկյան իմպերիալիզմից գաղութային կախման մեջ գցելու ավազակային պլանների գլխավոր նախաձեռնողն ու մշակողը։

Վ. Ի. Լենինը գիմակազերծ անելով Վիլսոնին, նրան համարում էր «Ամերիկյան միլիարդատերերի պարագլուխը և կապիտալիստական գայլերի սպասարկուն»։[1]

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթական արշավը և նրա տարածումը Ռուսաստանի ծայրամասերը ձախողեցին համաշխարհային իմպերիալիզմի այդ ծրագրերը։ Ռուսաստանի բանվոր դասակարգը կոմունիստական պարտիայի գլխավորությամբ հերոսական մարտերում պաշտպանեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումներն ամերիկյան իմպերիալիզմի դավերից։

* * *

Դիվանագիտական խարդախությունները, սպիտակ գեներալներին զենքով և դրամով օգնություն ցույց տալը, Բրեստի հաշտությունը ձախողելու բոլոր փորձերը անկարող եղան տապալելու սովետական իշխանությունը և ջլատելու մեր Հայրենիքը։ Սովետական իշխանությունն օրեցօր ամրապնդվում էր։ Հպարավոր բանվորներ ու գյուղացիներ նետվում էին անձնազոհ կռվի և պաշտպանում Հոկտեմբերի նվաճումները։

Այդ բոլորից կատաղած Վիլսոնն իր ելույթներից մեկում ուղղակի խնդիր դրեց.

«Դաշնակից պետություններն այլևս մտադիր չեն բոլշևիզմի նկատմամբ պասիվ տակտիկա վարելու։ Նրա մեջ (բոլշևիզմի) նրանք (ԱՄՆ-ը և դաշնակիցները) տեսնում են միակ թշնամուն, որի դեմ պետք է ոտքի ելնել։ Ռուսական պետությունը մի քանի կողմերից բաց է դաշնակիցների զորքերի համար, եթե նրանք ցանկանում են ներխուժել»։[2] Վիլսոնի խոսքերն ուղղված էին իր անգլո-ֆրանսիական դաշնակիցներին։

Ինտերվենտների բանակներն սպասում էին Կլեմանսոյի և Չերչիլլի ազդանշանին։ Չերչիլլի խոստովանությամբ 1917 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Անտանտի մյուս պետությունները վերջնականապես պայմանավորվեցին «միացյալ ուժերով Սովետական Ռուսաստանի դեմ զինված ինտերվենցիայի դուրս գալ»։[3]

Այսպիսով, Սովետական Ռուսաստանի դեմ 1918 թ. ձեռնարկված ինտերվենցիայի կազմակերպման գործում ԱՄՆ-ի իմպերիալիստները խաղում էին ակտիվ դեր, հանդես էին գալիս որպես ոգեշնչողներ։

Ահա այսպես «1918 թվականի առաջին կեսին կազմվեցին երկու որոշակի ուժեր, որոնք պատրաստ էին դիմելու Սովետական իշխանության տապալմանը— Անտանտի օտարերկրյա իմպերիալիստները և կոնտրռևոլյուցիան՝ Ռուսաստանի ներսում»։[4]

---

[1] Վ. Ի. Լենին, հատոր 28, 4-րդ հր., էջ 69։
[2] Леонтьев, Империализм доллара, էջ 29։
[3] У. Черчилль, Мировой кризис (ռուսերեն թարգմանություն), 1932, էջ 30։
[4] Համ(ր)Կ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 309, Երևան, Պետհրատ, 1947։

* * *

1918 թ. մարտի 2-ին Մուրմանսկի սովետի նախագահ տրոցկիստ Յուրյևվը հակառակ Լենինի և Ստալինի կարգադրության, Տրոցկու ցուցումով համաձայնության գալով ամերիկյան և անգլո-ֆրանսիական զինվորական և դիվանագիտական ներկայացուցիչների հետ, երկրամասի ղեկավարությունը կամովին հանձնեց նրանց։[1] Անտանտի իմպերիալիստների զորքերը ներխուժեցին Մուրմանսկ։ Մայիսի 24-ին Մուրմանսկ ժամանեց ամերիկյան «Օլիմպիա» հածանավը առաջին կարգի կապիտան Բերերի հրամանատարությամբ։ Անգլիական գեներալ Պոզենին ենթակա զորքերի մեջ կային անգլիացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ, սպիտակգվարդիականներ և ամերիկացիներ։ Միայն ամերիկյան զորքերի քանակն այդ շրջանում հասավ ավելի քան 5000 զինվորի և սպայի։ Ապրիլի 7-ին Մուրմանսկ ժամանեց ամերիկյան գեներալ Ռիչարդսոնը, որը հանդիսանում էր «Հյուսիսային Ռուսաստանում ամերիկյան զորքերի գլխավոր հրամանատարը»։[2] Նրա հետ միասին էր գործում նաև ադմիրալ Մակ-Կելլին, որը դաշնակիցների ռազմա-ծովային ուժերի բոլոր հրամանատարների ավագն էր։ Ամերիկացիներն ու դաշնակիցները գրավեցին նաև Արխանգելսկը և մարզի տասնյակ քաղաքներ ու գյուղեր։ Օկուպացիոն քաղաքականությունն իրագործելու համար ստեղծվեց արտակարգ դատարան ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից։ Սովետական օրգաններին ցրում էին։ Բոլշևիկյան կազմակերպությունները կա՛մ ցրվում էին, կամ անցնում խոր ընդհատակը։ Ամերիկացիների և դաշնակիցների գլխավորությամբ 1918 թ. օգոստոսի 2-ին ստեղծվեց այսպես կոչված «Հյուսիսային կառավարություն», որի ղեկավար նշանակվեց սպիտակգվարդիական ավանտյուրիստ Չայկովսկին։ Ամերիկյան սպաներն ու զինվորները անասելի տեռորի, սպանությունների ու կախաղանների արյունոտ կարգեր էին հաստատել գրաված շրջաններում՝ սովետական մարդկանց նկատմամբ։ Ամերիկյան զորքերը տեռորի և բռնությունների քաղաքականությամբ ուզում էին ճանապարհ հարթել և շարժվել մինչև Պետրոգրադ, գրավել այն։

Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը զինված ուժեր ուղարկեց Հեռավոր Արևելք։ Պետական դեպարտամենտը ԱՄՆ-ի Սիբիրյան էքսպեդիցիայի պետ նշանակեց գեներալ Գրևսին։ 1918 թ. օգոստոսի 16-ին 9000 ամերիկյան զինվորներ գեներալ Գրևսի հրամանատարությամբ ներխուժեցին Վլադիվոստոկ։ Մովից նրանց աջակցում էր ամերիկյան ռազմածովային էսկադրան՝ ադմիրալ Նաիտի հրամանատարությամբ։ Հեռավոր Արևելքում ամերիկյան իմպերիալիզմի ավազակային քաղաքականությունը հրով ու սրով անց էին կացնում գեներալ Գրևսը, ադմիրալ Նաիտը, որոնց ղեկավարում ու տոն էր տալիս Ճապոնիայում ԱՄՆ-ի գլխավոր դեսպան Մորիսը։

Ամերիկյան իմպերիալիզմի այդ գործակալները օգնում էին Կոլչակին Սիբիրում ռազմական դիկտատուրա հաստատելու համար։

Ինչպես չեխոսլովակյան խռովարարների պետ գեներալ Գայդան, այնպես էլ էսեռական հակառևոլուցիոն դավադրությունների ղեկավարներն իրենց յու-

---

[1] Документы по истории гражданской войны в СССР, том I, Огиз, 1940 г. стр. 190—191, 192.

[2] Интервенция на севере в документах, էջ 72։

բաքանչյուր գործողությունը համաձայնեցնում էին Անտանտի ինտերվենցիոն զորքերի հրամանատարության հետ և գործում էին նրա հրահանգներով։[1]

Սիբիրում և Հեռավոր Արևելքում ճապոնական զորքերի թիվը հասցվեց տասնյակ հազարների, սակայն ամերիկյան կառավարությունն աշխատում էր ճապոնական զինվորների ձեռքերով կրակից շագանակներ հանել ԱՄՆ-ի դոլարի արքաների համար։ Այդ բանը շուտով զգացին նաև ճապոնացիները և հակասությունն ու զզվոտոցը ճապոնական ու ամերիկյան իմպերիալիստների միջև ավելի բորբոքվեց։

Այդ հակասություններն ավելի ուժեղացան մանավանդ այն բանից հետո, երբ սովետական բանակները, հակահարձակման անցնելով, ծանր պարտության մատնեցին Կոլչակին և ինտերվենտներին։

Ճապոնիայում ԱՄՆ-ի գլխավոր դեսպան Մորիսը՝ ելնելով ստեղծված ծանր դրությունից, կապվեց Կոլչակի հետ և բանակցություններ վարեց՝ հաշվի առնելով նրան անհրաժեշտ օգնություն ցույց տալու չափը։ Մորիսը ամերիկյան կառավարությանն ուղարկած հեռագրում նշում էր, որ 1) ԱՄՆ-ի կառավարությունը պետք է ճանաչի Կոլչակի կառավարությունը. 2) ԱՄՆ-ը պետք է լրացուցիչ 25.000 ամերիկյան զորք ուղարկի Հեռավոր Արևելք՝ Սիբիրի կոմունիկացիաներում կռվելու. 3) Կոլչակին պետք է տրվի վարկ ինչքան որ հարկավոր է, որի հաշվին կարելի է բաց թողնել զենք, ռազմամթերք, հանդերձանք։[2]

Մորիսը ԱՄՆ-ի կառավարությանն ուղարկած մի ուրիշ հեռագրում պնդում է. «Եթե ԱՄՆ-ի քաղաքականության մեջ չմտցվեն այդ բոլոր պայմանները, այն դեպքում մենք ստիպված կլինենք հրաժարվել Արևելյան Սիբիրից հօգուտ ճապոնացիների»։[3]

ԱՄՆ-ի կառավարությունը 1918 թ. վերջերին հաճույքով ընդունեց Գրևսի, Մորիսի և Նաիտի առաջարկները՝ Կոլչակին զենքով, զինամթերքով, հանդերձանքով և դրամով օգնություն ցույց տալու մասին, որպես «Ռուսաստանի գերագույն կառավարողի»։ ԱՄՆ-ի Սպիտակ տունն անմիջապես ճանաչեց Կոլչակի «կառավարությունը»։ ԱՄՆ-ը հանդես եկավ Կոլչակին ակտիվ աջակցողի դերում։

ԱՄՆ-ի կառավարությունը շուտով հրապարակայնորեն պատրաստակամություն հայտնեց 15 միլիոն դոլարի արժեքով զենք ու զինամթերք բաց թողնել Կոլչակին՝ վարկի հաշվին։[4]

ԱՄՆ-ում Կոլչակի գործակալ Բախմետևի հեռագրերի համաձայն ԱՄՆ-ից Ռուսաստան, Հեռավոր Արևելքով Կոլչակին ուղարկվել է 100.000 հրացան 2.502.748 փամփուշտով, միաժամանակ հիշատակված է թե «միանգամայն հնարավոր է 500 միլիոն փամփուշտի պատվիրումը և ստացումը»։[5]

Ցարական մինիստր Սազոնովը Փարիզում բանակցություններ վարելով ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ, գնումներ էր կատարում Կոլչակի բանակի

---

1 Բենեշը 1948 թ. հրապարակված իր «Մեմուարների» մեջ խոստովանվել է գեներալ 1918 թ. չեխական ռեակցիոներների կապերն Անտանտի հետ։ Տես „Вопросы истории" № 10, 1951 թ., էջ 24։

2 Մորիսի հեռագիրը տես Բերյոզկինի գրքում, էջ 100։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 101։

5 Նույն տեղում, էջ 102։

համար։ Այսպես, Սազոնովը Կոլչակին ուղարկած գեկուցագրում հաղորդել է, թե հնարավոր է ձեռք բերել ամերիկյան 5 միլիոն դոլարի արժեքով մի քանի տեսակի տանկեր, ավտոմոբիլներ և այլն։

Այդ գործն իր վրա է վերցնում ամերիկյան առևտրական պալատը։

Բախմետևը Ամերիկայից ուղարկած մի հեռագրում Կոլչակին հաղորդում է այն մասին, թե «ամերիկյան կառավարությունը բաց է թողնում մեծ պարտիա գնդացիրներ»։[1]

Այսպիսով, ինչպես Ռուսաստանի հյուսիսում, նույնպես և Հեռավոր Արևելքում ու Սիբիրում ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբները և ամերիկյան բանակի գեներալներն ու ադմիրալները դավադրություններ էին կազմակերպում և իրականացնում Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և Անտանտի մյուս պետությունների ներկայացուցիչների հետ միասին։

Չնայած Կոլչակի և ամերիկյան, անգլիական ու ճապոնական իմպերիալիստների կոմբինացված գործողություններին, Սովետական Բանակը 1918—1919 թթ. հերոսական մարտերում ջախջախեց Սիբիր ներխուժած սպիտակգվարդիական բանդաներին և ԱՄՆ-ի ու Ճապոնիայի օկուպացիոն զորքերին։ ԱՄՆ-ի, նրա դաշնակիցների և սպիտակգվարդիական գործակալների ծրագրերը արևելքում չարաչար պարտության մատնվեցին։

* * *

Այժմ տեսնենք թե ինչ էր կատարվում Արևմուտքում։

ԱՄՆ-ի կառավարությունը զինված ուժերի հետ միասին Ռուսաստան էր ուղարկել բազմաթիվ զինվորական մասնագետներ, առևտրականներ, մոնոպոլիստներ, արդյունաբերող գաղութարարներ, լրտեսներ, դիվերսանտներ։ Ինտերվենտներին օգնություն ցույց տալու համար ամերիկյան կառավարությունն ստեղծեց հատուկ կազմակերպություն, որը կոչվում էր «Օգնության ամերիկյան ադմինիստրացիա» (ԱՐԱ), որը գործում էր Արևմտյան շրջաններում։

Այդ կազմակերպության գլուխը կանգնած էր մոլի իմպերիալիստ Հուվերը։ Կազմակերպությունը շուտով ֆիլիալներ ստեղծեց Մերձբալթյան երկրներում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Բալկանյան երկրներում և եվրոպական մյուս պետություններում։

Հուվերը 1919 թ. գարնանը պահանջում էր Յուդենիչից հարձակվել Պետրոգրադի վրա, խոստանալով նրան ցույց տալ ամեն տեսակի օգնություն։ 1919 թ. հունիսի 15-ին սպիտակգվարդիական գեներալների լագերը հասավ ամերիկյան մթերքների տրանսպորտը։ Պետրոգրադի վրա Յուդենիչի 1919 թ. մայիս-հունիսի արշավի նախօրյակին Ամերիկան Յուդենիչին հասցրեց 18.471 տոննա ալյուր, 1.501 տոննա բեկոն, 834 տոննա լյարդ, 1.548 տոննա խտացրած կաթ և շատ ուրիշ մթերքներ։[2] Այդ մթերքները բավական չէին։ Յուդենիչին հարկավոր էր բենզին։ ԱՄՆ-ի ներկայացուցիչ Հուվերին ուղարկած հեռագրում Յուդենիչը գանգատվում էր, թե բրիտանական տանկերը և զրահամեքենաներն ստացվել են առանց բենզինի։ «Եթե ամերիկյան կառավարությունը տրամադրի նաև բենզին, և հնարավորություն տա գործի դնելու այդ զրահապատ մեքենաները,— գրում է Յուդենիչը Հուվերին,— ապա. «հնարավոր կլինի գրավել Պետրոգրադը»։ Հուվերը նույն օրը հաղորդում է Յուդենիչին, թե ուղարկվում է 50

[1] Մորիսի հեռագիրը տես Բերյոզկինի գրքում։
[2] Նույն տեղում։

հազար բալոն բենզին և խնդրում է «իրեն միշտ տեղյակ պահել ֆրոնտի ուժերի դրության մասին»։[1]

Հերբերտ Հուվերը և Ուինստոն Չերչիլը միասին գործելով, 1919 թ. օգոստոսին կազմակերպեցին հեղաշրջում և ձևավորեցին այսպես կոչված «Հյուսիս արևմտյան կառավարություն» Պսկովի, Նովգորոդի և Պետրոգրադի մարզերի համար։ Պրեմիեր մինիստր նշանակվեց Լիանոզովը, իսկ ռազմական մինիստր՝ գեներալ Յուդենիչը։ Հակառևոլուցիոն կառավարություններ ձևավորվեցին նաև Մերձբալթիկայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում։ Ֆիննական կառավարության գլուխ կանգնեց սովետական ժողովրդի ոխերիմ թշնամի Մաններհեյմը, իսկ Լեհաստանում՝ ֆաշիստ Պիլսուդսկին։ ԱՄՆ-ը լեհական պաներին բաց թողեց 1,7 միլիարդ դոլարի արժեքով զենք, զինամթերք, հանդերձանք, դրանց թվում տանկեր, ինքնաթիռներ, գնդացիրներ։[2] ԱՄՆ-ը ակտիվ օգնություն էր կազմակերպում այդ բուրժուական հակառևոլուցիոն բոլոր ուժերին։ ԱՄՆ-ը այդ «կառավարություններին» դնելով իրենից ֆինանսական, պարենային և զինվորական կախման մեջ, կազմակերպում էր նրանց հակառևոլուցիոն զինված ուժերը և պատերազմի դուրս բերում Սովետական Ռուսաստանի դեմ։

1919 թ. Հուվերը ԱՄՆ-ի կառավարության հանձնարարությամբ սկսեց զենք, զինամթերք, հանդերձանք և պարենեղեն բաց թողնել ֆիննական, լեհական, էստոնական, լատվիական, լիտվական և մյուս սպիտակգվարդիականներին։ Մայիսի 12-ին «Դնսի» շոգենավով 2000 տոննա զանազան սննդանյութեր փոխադրվեց Էստոնիա որպես «վարկ», պահանջելով, որ էստոնական զորամասերը գրոհի գնան Պետրոդրադի վրա։

Վիբորգում ԱՄՆ-ի հյուպատոս Իմբերը այդ օրերին գրել է.

«Սպիտակգվարդիականներն այժմ Ամերիկային նայում են որպես իրենց միակ բարեկամի»։

Այդ միակ բարեկամն էլ չկարողացավ գլուխ բերել Յուդենիչի և սպիտակգվարդիական մյուս ատամանների հակառևոլուցիոն ծրագիրը։ Պետրոգրադի հերոս պաշտպանները Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ ձախողեցին և չախջախեցին Ամերիկայի և նրա դաշնակիցների ու գործակալների ագրեսիվ պլանները։

* * *

Նույնպիսի չարաչար պարտության մատնվեցին և տապալվեցին ԱՄՆ-ի դաղութային ծրագրերն ու ինտերվենցիոնիստական քաղաքականությունը Հարավում։

Ինչպես Հյուսիսում, Արևելքում և Հյուսիս-Արևմտյան մարզերում, նաև Ուկրաինայում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում իմպերիալիստական պետությունները օգնում էին տեղական սպիտակգվարդիական ուժերին և բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին՝ ձևավորելու բուրժուական գաճաճ կառավարություններ, այդ երկրներն անջատելով Ռուսաստանից, դարձնելով օտարերկրյա այս կամ այն իմպերիալիստական պետության

[1] Նամակի բազմածը տես Բերյոզկինի գրքում։

[2] В. Воробьев, „Товарищ Сталин—организатор побед на фронтах гражданской войны", стр. 28—29. Москва, 1949.

վոտչինան, որի վրա հենվելով, շարունակվում էր պատերազմը Սովետական Ռուսաստանի դեմ։

Այսպես՝ Դենիկինը նշանակվեց Ռուսաստանի «Հարավի զերագույն կառավարիչ»։ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Անգլիայից ստացված զենք, զինամթերք ու հանգերձանք տրամադրվեց Դենիկինի սպիտակգվարդիական «կամավորական բանակին»։ Այդ գործը կազմակերպելու համար ԱՄՆ-ը Հարավային երկրներն ուղարկեց իր զինվորական կազմակերպիչներին։ Այսպես, օրինակ՝ 1919 թ. փետրվարին ԱՄՆ-ի ռազմական մեծ միսիան փոխգնդապետ Ռիգսոմի գլխավորությամբ ժամանեց Օդեսա, նրա անդամները մեկնեցին Բեսարաբիա, Ղրիմ, Ուկրաինա, Մերձդոնյան շրջանները և Կովկաս։ Ամերիկյան նախկին զինվորական կցորդ Ռիգսոմը Դենիկինի շտարին կից խորհրդականի դերում էր հանդես գալիս և ամեն տեսակի ամերիկյան օգնություն էր ցույց տալիս Դենիկինի բանակին դեպի Մոսկվա շարժվելու համար։

1918 թվականի մայիսին ձևավորվեցին Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական հակաժողովրդական կառավարությունները— մենշևիկյան կառավարությունը՝ Վրաստանում, դաշնակցականներինը՝ Հայաստանում և մուսավաթականներինը՝ Ադրբեջանում։ Ադրբեջանում մուսավաթական կառավարությունը գտնվում էր Գյանջայում, իսկ Բաքվում դեռևս 1918 թ. գարնանից ստեղծվել էր Սովետական իշխանություն՝ Բաքվի կոմունան Ստ. Շահումյանի գլխավորությամբ։ Բաքուն հանդիսանում էր Անդրկովկասում սովետական իշխանության համար մղվող պայքարի կենտրոնը։ Անդրկովկասի բոլոր աշխատավորները կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պայքարի դրոշ էին բարձրացրել և ընթանում էին ռուս մեծ ժողովրդի հետ բարեկամության ուղիով, սովետական իշխանություն հաստատելու ուղիով։

1917 թվականի դեկտեմբերի 29-ին Սովետական կառավարությունը դեկրետ հրատարակեց, որով Լենինը և Ստալինը հռչակեցին Արևմտյան Հայաստանում բնակվող հայ ժողովրդի ինքնորոշման և անկախության ճանաչումը։[1] Հոկտեմբերյան ռևոլուցիայի պատմական դեկրետները հաշտության, հողի և ուրիշ հարցերի մասին, ցույց էին տալիս բոլոր ժողովուրդների ապատագրման ճիշտ ուղին։ Ոգեշնչված այդ պատմական դեկրետներով, Հայաստանի շատ գյուղերում ու քաղաքներում աշխատավորները բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ պայքարի դուրս եկան սովետական կարգերի համար։

Այսպես եղավ, օրինակ, Սարիղամիշում, Ղարսում, Ալեքսանդրապոլում, Հախպատում, Ջալալօղլիում և այլն։ Հայ ժողովուրդը ոգևորվելով լենինյան-ստալինյան դեկրետով, պատրաստվում էր հավաքվել աշխարհի բոլոր ծայրերից, վերախմբավորվել իր պատմական հողերի վրա, կազմել սովետական ազատ ռեսպուբլիկա։ Հայաստանի և Անդրկովկասի աշխատավորների ամբողջ համակրանքը Սովետական Ռուսաստանի կողմն էր, ռուս ժողովրդի հետ միասնության մեջ էին տեսնում իրենց ազատությունը Անդրկովկասի բազմազգ բանվորներն ու գյուղացիները։

ԱՄՆ-ի և մյուս իմպերիալիստական կառավարությունները հաշվի էին առնում այդ հանգամանքը և ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում Անդրկովկասում աճող ռևոլուցիոն շարժումները ճնշելու, այնտեղ Անտանտի միլիտարիստ-

[1] Ленин—Сталин, Избранные произведения 1917 года, стр. 558, Москва, 1938.

ների տիրապետություն հաստատելու համար, հայ ժողովրդի վերամիավորման, անկախ պետություն ստեղծելու, սովետական ազատ կյանք կառուցելու պատմական մեծ գործը տապալելու համար։

Անտանտի և անգլո-թյուրքական ինտերվենտների հետ ստոր գործարքի մեջ մտան Անդրկովկասի ժողովուրդների ոխերիմ թշնամիներ դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները, Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը օտարերկրյա զավթիչներին վաճառելու համար։

Համաշխարհային իմպերիալիզմի պարագլուխներ Վիլսոնը, Կլեմանսոն և Լլոյդ Ջորջը ակտիվորեն քննարկում էին Անդրկովկասի օկուպացման և գաղութացման հարցը, ժողովրդի ազատագրական պայքարն արյան մեջ խեղդելու հարցերը։ Ամերիկյան գաղութարարներից մեկը, Ջերարդը 1919 թ. հուլիսի 6-ին «Նյու-Յորք Թայմզ» թերթում տպված հոդվածի մեջ նկարագրել է Հայաստանի բնական հարստությունները և հումքի բազան։[1] Ամերիկյան գեներալ Ջորջ Մոսլին գրել է, թե «ԱՄՆ-ը պետք է լիակատար իշխի այն բոլոր տերիտորիաների վրա, որտեղ հայեր են ապրում...»։[2]

1919 թ. հունիսի 28-ին Վիլսոնը, Լլոյդ Ջորջը և Կլեմանսոն համաձայնվում են Հայաստանը ճանաչել որպես ամերիկյան պրոտեկտորատ, Հայաստանի մանդատը տալ ԱՄՆ-ին։ Ամերիկային տրվեց նաև Կոստանդնուպոլիսը, Բոսֆորը, Դարդանելը և Մարմարայի ծովը։[3]

Հունիսի 27-ին Հերբերտ Հուվերը նամակով դիմել էր Վիլսոնին առաջարկելով գնդապետ Հասկելին նշանակել դաշնակիցների գերագույն կոմիսար Հայաստանում։ Այդ առաջարկը պաշտպանում էր նաև Մորգենթաուն։ Վիլսոնը, սակայն, գտնում էր, որ պետք է մի քայլ ևս առաջ գնալ— Հասկելին նշանակել ոչ միայն գերագույն կոմիսար Հայաստանում, այլև նրան համարել դաշնակիցների գերագույն կոմիսար ամբողջ Անդրկովկասում, Թյուրքիայում և Սև ծովի մերձափնյա շրջաններում, որ դաշնակից մյուս պետությունների օկուպացիոն իշխանության բոլոր օրգանները և զինվորական ներկայացուցիչները պետք է ենթարկվեն Հասկելին։ Վիլսոնն, այսպիսով, ուզում էր, որ հենց նա, ամերիկյան զինված ուժերի շտաբի ներկայացուցիչը լինի գլխավոր պետը, իրականացնի այդ շրջանների օկուպացիան, ինչպես անհրաժեշտ էր ամերիկյան իմպերիալիստներին, ինչին ձգտում էին խոշոր մոնոպոլիստները։

1919 թ. հուլիսի 5-ին դաշնակիցների «10-ի խորհուրդը» որոշեց գնդապետ Հասկելին նշանակել «գերագույն կոմիսար Հայաստանում»։[4] Նույն որոշման մեջ սահմանված էր, որ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի բոլոր ներկայացուցիչները Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում ու Կոնստանդնուպոլսում ամերիկյան գնդապետ Հասկելից պետք է ստանան հրահանգներ, իրենց գործողությունների ընթացքում համագործակցեն նրա հետ և բոլոր հարցերում ենթարկվեն նրան։[5]

---

[1] Այդ հոդվածից բաղվածքները տես Ա. Կունինայի Провал американских планов завоевания мирового господства в 1917—1920 гг. գիրքը, էջ 89։

[2] Նույն տեղում, էջ 89—90։

[3] Б. Штейн, Русский вопрос на парижской мирной конференции 1919—1920 гг., стр. 338--339.

[4] Նույն տեղում, էջ 341։

[5] Նույն տեղում։

Հասկելը հատուկ էքսպեդիցիայով ժամանեց Հայաստան։ Նա իր հետ ուներ բավականաչափ լրտեսներ, ոստիկաններ, օկուպացիոն քաղաքականությունն իրականացնող փորձված գաղութարարներ, որոնք կեղծավոր ճառերով ու «բարեգործական» նենգ պրիոմներով իրականում հայ ժողովրդի համար բերել էին ԱՄՆ-ի ստրկատերերի լուծը։ Դաշնակները ստորաքարշ քծնանքով շողոքորթում էին իրենց ամերիկյան տերերին, նրանց օգնությամբ տեռորի էին ենթարկում ժողովրդին։

Երկրում ծանր վիճակ էր տիրում։ Սովն ու տիֆը հնձում էին աշխատավոր բնակչությանը։ Անդրկովկասի ժողովուրդները զայրացած էին սպիտակգվարդիական «կառավարությունների» և նրանց գործակալների դեմ։

Բաքվում սովետական իշխանությունը տապալելով և 26 կոմիսարներին անգլո-ամերիկյան դահիճների ու նրանց գործակալների ձեռքով գնդակահարելով, իմպերիալիստները չկարողացան և չէին կարող կանխել ռևոլուցիայի վերելքը։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններն ավելի ու ավելի շատ բանվորներ ու գյուղացիներ էին համախմբում և պատրաստում էին նրանց ռևոլուցիոն ելույթի՝ Սովետական Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի բուրժուազիային տապալելու, սովետական կարգեր հաստատելու համար, Սովետական Ռուսաստանի հետ համագործակցելու համար։

Հասկելն այդ ամենը լավ էր զգում։ Օգոստոսի 29-ին Փարիզի կոնֆերանսում Կլեմանսոն ընթերցեց Հասկելից ստացված մի հեռագիր։ Գնդապետ Հասկելը գրում էր, թե ինքն «ուսումնասիրել է» դրությունը Հայաստանում. «... հարկավոր է օգնություն. շտապ զորք ուղարկել։ Եթե հնարավոր է, ցանկալի կլիներ ուղարկել հեծելազոր։ Միայն զորքի ուղարկումը կարող է փրկել դրությունը»։[1]

Այնուհետև Վիլսոնը, Կլեմանսոն և Լլոյդ Ջորջը «մեծահոգություն» և «առատաձեռնություն» հանդես բերելով, առաջարկում են՝ իրենց երկրի զինված ուժերից ավելի շատ զորք ուղարկել Հասկելի էքսպեդիցիային,[2] մանդատով ԱՄՆ-ին տրված երկրներն օկուպացնելու համար։

Լենինը բացատրելով իմպերիալիստների այդ «մանդատի» էությունը, գրել է.

«Եվ երբ խոսում են գաղութների վրա մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի կերպով գիտենք, որ դա մանդատների բաժանում է կողոպուտի, թալանի համար, որ դա երկրագնդի բնակչության շնչին փոքրամասնությանը իրավունք տրամադրել է՝ շահագործելու երկրագնդի բնակչության մեծամասնությանը»։[3]

Եվ իսկապես, դոլարի արքաները հավաքվում և մանդատ էին բաժանում թե ով ո՞ր երկրի տերը պետք է դառնա։ Եվ հայ ժողովրդի գլխին կախվել էր ամերիկյան մանդատով բերվող ստրկացման ահավոր սպառնալիքը։ Ամերիկյան սատրապների ոճրագործություններին չափ ու սահման չկար։

Ամերիկյան իմպերիալիզմը հանդես էր գալիս մեր երկրի ժողովուրդներին ստրկացնողի, կողոպտողի ու թալանողի դերում։ Կարելի է բերել մի քանի փաստեր, ԱՄՆ-ի մանդատով «հովանավորված» Հայաստանից, որտեղ աճում էր

[1] Б. Штейн, Русский вопрос на парижской мирной конференции 1919—1920 гг., стр. 343.

[2] Նույն տեղում։

[3] В. И. Ленин, Соч., т. 30, стр. 138 (IV изд. рус.).

դաղթականությունը, գործազրկությունը, սովը և ժողովուրդը կանգնած էր անդունդի եզրին։

1920 թ. ապրիլի 1-ին հրապարակված մի պաշտոնական փաստաթղթում կարդում ենք.

«Թերևս աշխարհի ոչ մի անկյունում այնպիսի արագությամբ չի աճում թշվառների, խեղճերի, շահագործվողների բանակը, որպիսի արագությամբ այդ կատարվում է Հայաստանի գյուղերում»։[1]

Ամերիկյան մանդատով սովի մատնված Հայաստանում հայ ժողովրդի երդվյալ թշնամի դաշնակները աշխատավորների ցասումից պաշտպանություն էին գտնում ամերիկյան «զերագույն կոմիսարի» հովանու տակ և երկիրը դարձրել էին նրա գաղութը։ Ամերիկյան իմպերիալիզմի սատրապները Հայաստանում դաշնակների հետ համագործակցած վարում էին ռեակցիոն քաղաքականություն, ուղղված հայ ժողովրդի դեմ և Կովկասի բոլոր ժողովուրդների դեմ. ԱՄՆ-ի իմպերիալիստները կազմակերպում և ոգեշնչում էին Անդրկովկասի հակասովետական տարրերին, ամեն ինչ անում էին Կովկասում ռևոլյուցիոն շարժումները ճնշելու, ժողովրդի ազատագրական շարժումներն արյան մեջ խեղդելու և բուրժուազիայի դիկտատուրան պահպանելու համար։

Այդպիսին էր ԱՄՆ-ի մանդատների քաղաքականությունը Հարավում, Հայաստանում։ Սակայն աշխատավորներն ատում էին ամերիկյան իմպերիալիստներին, պայքար էին մղում նրա գործակալների դեմ։ Այդ պայքարում Հայաստանի աշխատավորները մենակ չէին։ Նրանց պայքարին ուղղություն էր տալիս Ռուսաստանի բանվորների և գյուղացիների քաջարի օրինակը և նրանց օգնությունը։ Բոլշևիկյան պարտիան կազմակերպում և գլխավորում էր աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության հաղթանակի։

Սովետական Ռուսաստանի և նրա փառապանծ 11-րդ Կարմիր Բանակի օգնությամբ Հայաստանի աշխատավորները 1920 թ. ջախջախեցին իրենց ստրկացնողներին, ձախողեցին ԱՄՆ-ի մանդատների գաղութացման պլանները և նվաճեցին իրենց անկախությունն ու ազատությունը։

* * *

ԱՄՆ-ի իմպերիալիզմը սովետական իշխանության դեմ մղած իր կատաղի պայքարը չէր սահմանափակում միայն ռազմական ինտերվենցիա կազմակերպելով։ ԱՄՆ-ի լրտեսները, դիվերսանտները և դիվանագետները փոխգործողության մեջ էին գտնվում էքսպեդիցիոն զորահրամանատարների հետ և գործում էին սվինին հավասար։ Հատկապես Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի օրերին, ռևոլյուցիոն շարժումների աճումից վախեցած, ամերիկյան իմպերիալիստները մեծ չափերով ընդարձակեցին ԱՄՆ-ի գաղտնի ոստիկանության ցանցը և նրա գործակալներն ուղարկվեցին ուրիշ երկրներ։ Եթե 1913 թ. «Հետաքննության ֆեդերալ բյուրոն»՝ ամերիկյան այդ գեստապոն պահպանելու համար բաց էր թողնվել 415.452 դոլար, ապա 1920 թ. բաց էր թողնվել 2.437.104 դոլար։[2]

ԱՄՆ-ի հետախուզությունը Ռուսաստանում սարդի ոստայն էր հյուսել։ Այսպես. Պետրոգրադում դեսպանատուն, հյուպատոսություն, զինվորական կցորդ, Կարմիր խաչի կենտրոն, Մոսկվայում՝ գլխավոր հյուպատոսություն,

[1] «Կոմունիստ» թերթ, № 1, ապրիլ, 1920 թ. Բաքու։

[2] В. Л. Минаев, Американское гестапо, стр. 55, М., 1950.

Իրկուտսկում՝ գլխավոր հյուպատոսություն, Արխանգելսկում, Վլադիվոստոկում, Օմսկում, Չիտայում, Տոմսկում, Սամարայում, Թիֆլիսում, Բաթումում՝ հյուպատոսություններ, Մուրմանսկում՝ հյուպատոսական գործակալություն։

Ամերիկյան գեստապոն կանգ չէր առնում ոչ մի միջոցի առաջ։ Նա կիրառում էր սպանությունների, կաշառման, կեղծիքի, տեռորի քաղաքականություն Ուոլ Ստրիտի առաջադրանքները կատարելու համար։

1918 թ. ԱՄՆ-ի և մյուս երկրների դեսպանները փոխադրվեցին Վոլոգդա, որտեղ կազմակերպվեց «դեսպանների դավադրությունը»։ ԱՄՆ-ի դեսպան Ֆրենսիսը, Ֆրանսիայի դեսպան Նուլանսը և անգլիական լրտես Լոկկարտը, կապվելով Տրոցկու, Բուխարինի և մյուս դավաճանների հետ, նախապատրաստվում էին հարված հասցնել սովետական իշխանության կենտրոնին՝ Մոսկվային։ Այստեղ ևս ամերիկյան գեստապոն ակտիվ դեր էր խաղում։

Լենինի վիրավորվելը էսեռ Կապլանի կրակոցից, Ձերժինսկու ձերբակալումը, Ուրիցկու և Վոլոդարսկու սպանությունները կատարվեցին ամերիկյան կառավարության ներկայացուցիչների հրահանգներով ու առաջադրանքներով։

Կապլանը ատրճանակն ու թունավոր գնդակով փամփուշտներն ստացել էր էսեռ Բորիս Սավինկովից, իսկ Սավինկովը ամեն օր գաղտագողի այցելում էր ԱՄՆ-ի և Անգլիայի դեսպանությունները։[1] Անգլիական լրտես Լոկկարտի դատավարությունը պարզեց (1918 թ. նոյեմբերին), որ ամերիկյան լրտեսներ Պուլը և Կոլոմատիանը գործել են անգլիական հայտնի լրտես Ռեյլեի և ֆրանսիական լրտես Վորտոմոնի հետ միասին։

Սովետական նոր կազմակերպված երիտասարդ հետախուզությունը, որ բուն ժողովրդի ծոցից էր առաջ եկել, որին աջակցում էր ռևոլուցիոն ժողովուրդը, բացահայտեց դարերի փորձ ու պատմություն ունեցող իմպերիալիստական լրտեսների մեքենայությունները։ Չեկան դիմակազերծ արեց քողարկված դիվերսանտներին։ Ձերբակալության ժամանակ Կոլոմատիանի մոտ հայտնաբերվեցին ամերիկյան 32 գործակալների ցուցակն ու հասցեները և մի թղթապանակ՝ ծածկագրերի ու կոդերի։

Ամերիկյան իմպերիալիզմի գործակալների ցանցը Ռուսաստանից ձգվում էր մի գծով դեպի Վաշինգտոն, մյուսով՝ դեպի Փարիզ։ Ֆրանսիայի մայրաքաղաքում 1919—1920 թթ. տեղի էր ունենում Փարիզի խաղաղության կոնֆերանսը։ Կոնֆերանսում Վիլսոնը, Լլոյդ Ջորջը և Կլեմանսոն քննում էին «Ռուսաստանի հարցն» առանց Ռուսաստանի ազատ ժողովրդի ներկայացուցիչների այնպես, ինչպես այժմ ամերիկյան ներկայացուցիչները ՄԱԿ-ում քննում են Չինաստանի հարցերն առանց չինական մեծ ժողովրդի ներկայացուցիչների։

Այսպիսով, ԱՄՆ-ի ժամանակակից կառավարության ղեկավար կլիկի հակասովետական քաղաքականությունը իր սկիզբն առնում է սովետական պետության առաջին օրերից։ 1951 թ. դեկտեմբերի 19-ին արտասանած ճառում ընկեր Վիշինսկին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 6-րդ սեսիայում դիմակազերծ է անում ԱՄՆ-ի կառավարության բացահայտ ագրեսիան, նրա միջամտությունը ուրիշ երկրների գործերին, նրա սանձարձակ քայլերը Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ։ Ընկ. Վիշինսկին նշում է, որ ԱՄՆ-ը դեռևս Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի հաղթանակից անմիջապես հետո, հաջորդ օրն իսկ, փորձեր կատարեց Ռուսաստանի բանվորներին ու գյու-

[1] М. Сейерс и А. Кан, Тайная война против Сов. России, 52—53.

զացիներին ստրկացնել։ Նա, դիմելով ԱՄՆ-ի ներկայացուցիչներին, ասում է, որ այդ նպատակով դուք «ձեռնարկեցիք ձեր զինված ինտերվենցիան Սովետական Ռուսաստանում և ձեր դոլարի ոսկու դետը լցրիք սպիտակգվարդիական գեներալների գրպանները, որպեսզի օգնեք... բայց ո՞ւմ. Բուլակ-Բալախովիչին, Յուդենիչին, Դենիկինին, Կոլչակին, Կրասնովին, Չայկովսկուն, մենշևիկներին, սպիտակ էսեռներին, դիվերսանտներին, տեռորիստներին»։[1]

Այսպիսով, շարադրված փաստերից մենք տեսանք, որ Չերչիլի և Կլեմանսոյի հետ միասին ամերիկյան իմպերիալիզմի ծառաներ Վիլսոնը և Հուվերը հանդիսացան երիտասարդ սովետական իշխանության դեմ ռազմական ինտերվենցիայի ակտիվ կազմակերպիչները։ Ամերիկյան իմպերիալիստական կառավարությունը, աշխարհում առաջին սովետական ռեսպուբլիկայի դեմ ինտերվենցիա կազմակերպելով, ծրագրել էր տապալել սովետական իշխանությունը, մասնատել երկիրը և դարձնել ամերիկյան գաղութ։

Լենինը, դիմակազերծ անելով ԱՄՆ-ի իմպերիալիստների հրեշավոր ոճրագործությունները, կանխատեսում էր նրանց անխուսափելի վերջը. «Նրանք դալիս են ճնշելու մի ժողովուրդ, որը կապիտալիզմից անցնում է ազատության, դալիս են խեղդելու ռևոլուցիան։ Եվ մենք բացարձակ վստահությամբ ասում ենք, որ այժմ շափից դուրս հղփացած գազանը նույնպիսի անդունդ կգլորվի, ինչպես գլորվեց գերմանական իմպերիալիզմի գազանը»։[2]

Լենինի մարգարեական կանխատեսումը իրականացավ։ 1918—1920 թթ. ինտերվենցիան կազմակերպող գազանները խորտակվեցին, ջախջախվեցին։

Սովետական ժողովուրդը հաղթեց իմպերիալիստներին և պաշտպանեց իր ազատությունն ու անկախությունը։

* * *

ԱՄՆ-ի և Անտանտի մյուս պետությունների հակասովետական ինտերվենցիայի ջախջախումը կազմակերպում և գլխավորում էին բոլշևիկների պարտիան, նրա առաջնորդներ Լենինն ու Ստալինը։ Մերկացնելով իմպերիալիստական պետությունների հակասովետական քաղաքականությունը, Լենինը սովետական ժողովրդին կոչ էր անում պայքարել թշնամու դեմ և պաշտպանել Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։

Ամերիկյան, անգլո-ֆրանսիական և գերմանական իմպերիալիզմի զինված բանդաների դեմ մղվող կատաղի մարտերի մեջ ստեղծվում և կոփվում էին սովետական բանակի զորամասերը, ծնվում և դաստիարակվում էին նրա զորավարները, հերոսներն ու բոլոր ռազմիկները։ Նրանք գիտեին, որ արդարացի, ազատագրական, Հայրենական պատերազմ են մղում իմպերիալիզմի զինված բանդաների դեմ և պաշտպանում են իրենց ազատությունը։ Կրելով անհամար զրկանքներ, դիմանալով անասելի դժվարությունների, Սովետական Բանակի զորամասերը մեծ Ստալինի զորավարական հանճարեղ պլաններով մեկը մյուսի ետևից ջախջախեցին Կոլչակի, Յուդենիչի, Դենիկինի, Վրանգելի սպիտակ բանակները և սովետական երկրի սահմաններից դուրս վռնդեցին ԱՄՆ-ի ու մյուս իմպերիալիստների զինված բանդաներին։

---

[1] „Правда" № 355, 21 դեկտ. 1951 թ.։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 192։

Ամերիկյան իմպերիալիզմի դեմ մղվող հերոսական պայքարում սովետական երկրի բանվորներն ու գյուղացիները մենակ չէին։ Նրանց հերոսական պայքարով ոգեշնչվում էին Ամերիկայի հազարավոր ազատասեր աշխատավորներ։ Բավական է հիշատակել, որ միայն 1919 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցավ 5577 գործադուլ 4 միլիոն բանվորների մասնակցությամբ։ Դեռևս այն ժամանակ երիտասարդ կոմունիստ Ֆոստերը հերոսաբար մարտնչում էր ԱՄՆ-ի իմպերիալիզմի հակասովետական քաղաքականության դեմ։ Ֆոստերի գլխավորությամբ 350 հազար մետաղագործներ գործադուլ հայտարարեցին, պահանջելով զորքերը ետ կանչել Ռուսաստանից։

Լենինի ամերիկյան բանվորներին գրած պատմական նամակները ռևոլուցիոն պայքարի էին կոչում ԱՄՆ-ի կապիտալիստների լծի տակ ստրկացված միլիոնավոր բանվորներին։ Նրանք պայքար էին մղում Գոմպերսի տիպի սոցիալ-դավաճանների դեմ, որոնք ծառայագրվել էին ԱՄՆ-ի իմպերիալիստներին։

«Սոցիալիզմի երկրի վրա միջազգային կապիտալի առաջին ռազմական հարձակումը վերջացավ նրա լիակատար տապալումով»,[1]— գրել է ընկեր Ստալինը։

Սովետական Բանակը տապալեց նաև իմպերիալիզմի երկրորդ ռազմական հարձակումը սոցիալիզմի երկրի դեմ 1941—1945 թթ.։

Այսպիսով, պատմության դասերը ցույց են տալիս, որ վերջին 30 տարիների ընթացքում սովետական իշխանությունը երկու անգամ չարաչար պարտության է մատնել իմպերիալիստների համաշխարհային տիրապետության պլանները։

Այժմ ԱՄՆ-ի միլիտարիստները կաշվից դուրս են գալիս աշխարհը նոր, երրորդ համաշխարհային պատերազմի բոցերի մեջ նետելու համար։ Նրանք սանձարձակ ինտերվենցիա են կազմակերպել Կորեայում, իրենց շուրջն են համախմբել ամբողջ աշխարհի ռեակցիոն ուժերը, վերածնում են ֆաշիստական սև ոգիները Արևմտյան Գերմանիայում և միլիտարիզմը Ճապոնիայում։

Սակայն, օրըստօրե ավելի է աճում խաղաղության կողմնակիցների հզոր շարժումը։ Սովետական Միության գլխավորած սոցիալիզմի և դեմոկրատիայի լագերի ուժերն աճում են և ամրանում։ Այդ ուժերը պաշտպանում են խաղաղության գործը։ Իսկ ամերիկյան իմպերիալիստները մոլեգնում են և ծարավի են նոր պատերազմի, նոր ինտերվենցիաների։ Բայց պատմությունը ոչ մի լավ բան չի խոստանում Վիլսոնի և Հիտլերի հաջորդներին, նոր պատերազմի հրձիգներին։ Նրանք դատապարտված են խորտակման։

Սոցիալիզմի երկիրը, խաղաղության և դեմոկրատիայի երկիրը, նոր դեմոկրատիայի երկրների հետ միասին դիմակազերծ է անում ԱՄՆ-ի միլիտարիստների ագրեսիվ պլանները։ Սոցիալիզմի և դեմոկրատիայի լագերը հզոր է և անպարտելի։ Եթե 1918—1920 թթ. սովետական երկրի հերոս ժողովուրդը և նոր ստեղծված զինված ուժերը մեն-մենակ տապալեցին 14 պետությունների արշավանքը, այժմ սոցիալիզմի լագերի հզոր ուժերը կարող են հիմնահատակ խորտակել համաշխարհային իմպերիալիզմը։

---

[1] Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 333։

Ар. Мнацаканян

Провал агрессии американского империализма против советской власти в 1917—1920 гг.

Резюме

Антисоветская агрессивная политика современных реакционеров США имеет свое бесславное прошлое.

В. И. Ленин и И. В. Сталин в своих высказываниях разоблачали агрессивные захватнические цели американского империализма и антисоветскую политику правительства США еще в первые годы установления советской власти.

В статье вскрывается активная роль американского империализма в деле организации вооруженной интервенции против народов Советской страны и разоблачается душитель свободолюбивых народов, самый реакционный и наглый, самый кровавый и бешеный американский империализм.

Автором использованы материалы, приведенные в ряде изданных книг, сборников документов, разоблачающие реакционную, агрессивную политику Соединенных Штатов Америки в отношении народов нашей страны в 1917—1920 годах. Анализ этих материалов раскрывает картины вооруженной интервенции, организованной США и ее англо-французскими союзниками на севере (Мурманск), на востоке (Владивосток), на западе (Прибалтика, Петроградский фронт) и на юге (Украина, Крым, Кавказ). Автор вскрывает грубое вмешательство правительства США во внутренние дела нашей страны, его дипломатические махинации и коварные приемы, сделки американских реакционеров с белогвардейской контрреволюцией, направленные против советской власти.

На основе ряда фактических материалов в статье разоблачаются хищнические планы американских колонизаторов на Кавказе, в частности в Армении, где вместе с американскими захватчиками выступали их лакеи—дашнаки и другие буржуазно-националистические банды.

Один из разделов статьи посвящен разоблачению гнусных приемов агентов американской разведки. Американская разведка создала широкую агентурную сеть в городах и областях Советской страны, которая, так же, как и английская и французская, действовала в тесном контакте с троцкистами, бухаринцами и левыми эсерами, готовила террористические акты, совершала диверсии, убийства деятелей советской власти. Молодое Советское государство разоблачило и выкорчевало этих агентов империализма.

Под руководством партии Ленина—Сталина рабочие и крестьяне нашей страны в героической борьбе разгромили американо-английских интервентов и их белогвардейских, буржуазно-националистических агентов, отстояли свободу и независимость нашей Советской родины.